պատեցին քաղաքի պարիսպները։ Զիւնը տասը կանգունի չափ կը ծածկէր քաղաքի բոլոր շրջակայքը, Խլաթ, Դուին եւ ամբողջ աշխարհը։ Սորանից առաջ Իւսուփ ուղարկել էր իւր մարդիկը իւր գաւառի գիւղերը. երբ սոքա խումբ խումբ ցրւած էին զանազան կողմեր, նոցա վերայ յարձակեցան հայ իշխանք խուժանի բազմութեան հետ եւ կոտորեցին նոցա մի օրւայ ընթացքում։ Երբ Հայերը մի քանի օր շարունակ պաշարեցին քաղաքը, Իւսուփ նոցա դէմ ելաւ եւ ճակատեցաւ, մինչեւ որ սպանեցաւ։

Մուտավակկիլ ուղարկեց Բուղայ Շարաբիին Հայաստան՝ Իւսուփի արեան վրէժը գնելու համար. մտնելով Հայաստան Միջագետքից, նա նախ ձերբակալեց Արզնում Մուսայ ի. Զուբարին (նորա եղբայրներն էին՝ Իսմայէլ, Սուլէյման, Ահմեդ, Իսայ, Մուհամմեդ եւ Հարուն) եւ ուղարկեց նորան ամիրապետի դուռը. իսկ ինքն բանակեցաւ Խոյթի լեռներում։ Խութեցիք Հայաստանի այն բնակիչներն են, որոնք սպանեցին Իւսուփ ի. Մուհամմեդին. Բուղայ պատերազմեցաւ նոցա հետ, յաղթեց, սպանեց նոցանից 30.000, գերեց նոցանից մեծ բազմութիւն եւ բնակեցրեց Հայաստանի զանազան մասերում։ Գալով Աղբակ գաւառը (որ Վասպուրականին կը պատկանի) նա գերեց Աղբակի իշխան Աշոտ ի. Համզայ Աբու Աբբասին եւ վերաշինեց Նախիջեւան։ Ապա եկաւ Դուին, ուրմի ամիս մնալուց յետոյ գնաց Տփղիս։

Բուղան յաղթում է Իսահակ ի. Իսմայէլին եւ այրում Տփղիս։[1]

238 թ. շաբաթ օրը՝ առաջին Ռաբի ամսից 10 օր առաջ՝ Բուղան ուղարկեց Զիրակ թուրքին,

1 Հմմտ. Թովմայ Արծրունի, հրատ. Ք. Պատկանեանի, Պետերբուրգ, 1887, էջ 172—175։